

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՄԼԱՆ ԱՐՇԱԿԻ

**ԷԹՆՈԶԱԳԱԶԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ
ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ
Ք. Ա. VII - VI ԳԳ.**

Է. 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Զոյան Ա. Վ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Փիլիպոսյան
պ.գ.թ., դոցենտ Ե. Հ. Մարգարյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 11-ին, ժամը 13.00-ին
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006
«Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019,
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 8-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դազարյան Ռ. Պ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Ք.ա. VII–VI դդ. Առաջավոր Ասիայում տեղի ունեցան շրջադարձային իրադարձություններ, որոնք արմատապես վերափոխեցին տարածաշրջանի էթնոքաղաքական քարտեզը: Առաջավոր Ասիայում տեղի ունեցած այդ էթնոքաղաքական տեղաշարժերը հայաստանյան պատմագրության մեջ պատշաճ քննարկման առարկա չեն դարձել: Դրանք սովորաբար օգտագործվել են միայն տվյալ ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհում վկայված առանձին իրադարձությունների ուսումնասիրման նպատակով: Մինչդեռ հիմնախնդիրն ամբողջական լուսաբանման կարիք ունի, ինչը հնարավոր է միայն ամբողջ Հին Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական պատմության համակողմանի ուսումնասիրության լուսի ներքո:

«Էթնոքաղաքականությունը»՝ որպես պետության ներքին քաղաքականություն, և «էթնոքաղաքագիտությունը»՝ որպես գիտություն, ուսումնասիրում են մի կողմից՝ էթնիկական, մյուս կողմից քաղաքական իրականությունը: Այն ուսումնասիրում է քաղաքական կյանքում էթնիկական խմբերի հարաբերությունները ինչպես միմյանց, այնպես էլ պետության հետ: Էթնոքաղաքականությունը էթնիկական խմբերի միջև փոխհարաբերությունների կարգավորմանը նպատակաուղղված քաղաքականությունն է, որն իրականացվում է պետության կողմից մշակված հատուկ ծրագրով: Ներպետական առումով, էթնոքաղաքականությունը պետության մեջ ոչ իրավահավասար պայմաններում գտնվող էթնիկական տարբեր խմբերի միջև տեղի ունեցող փոխհարաբերություններն են, որոնցում հիմնականը իշխանության հարցն է: Այդ իսկ պատճառով, ուսումնասիրել կոնկրետ երկրի վարած «էթնոքաղաքականությունը»՝ նշանակում է ուսումնասիրել այն, թե ինչպիսի էթնիկական խմբեր և հետաքրքրություններ են ներկայացված պետական իշխանության կառուցվածքում և այլն:

Էթնոքաղաքականությունը՝ որպես օբյեկտիվ գործընթաց, առաջացել է պետությունների ձևավորման հետ: Թեև նրա առանձին և պատահական դրսևորումները կարելի է գտնել Առաջավոր Ասիայի հնագույն պատմության ծալքերում, սակայն այն որպես երևույթ, իրողություն դարձավ միայն վերոնշյալ տարածաշրջանում առաջին ծավալապաշտ տերությունների ի հայտ գալով և ավելի ընդգծված բնույթ ստացավ այդ տերությունների արտաքին նվաճումների և օտար բնակչության բռնագաղթման ժամանակ: Ատենախոսության մեջ փորձել ենք ցույց տալ, որ ցեղային վերաբնակեցումների քաղաքականությունը որպես պետական ծրագիր սկսել է կիրառվել միայն Ք.ա. I հազարամյակից սկսած, և որ այն առաջին հերթին հատուկ էր Ուրարտուին և Ասորեստանին:

Վերհանելով Առաջավոր Ասիայի գերտերությունների վարած էթնոքաղաքականությունը՝ նվաճված կամ քաղաքական ազդեցության տակ ընկած փոքր պետությունների բնակչության նկատմամբ և մասնավորապես վերաբնակեցումների քաղաքականությունը՝ կարելի է արձանագրել, որ այն արդիական է երկու առումով: Մի կողմից այն որոշակի հնարավորություններ է

ընձեռում հին, նոր և նորագույն ժամանակներում հայտնի գաղութացման գործընթացների պատճառահետևանքային օրինաչափությունները ճիշտ հասկանալու համար, մյուս կողմից օգնում է ընկալելու արդի փուլում դրսևորվող տրամագծորեն հակառակ դրսևորումները՝ «էթնիկական մաքրագերծումները»: Էթնոքաղաքականության հին և արդի դրսևորումների համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ ժամանակի մեջ այն էական փոփոխություններ չի կրել:

Ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է տարաբնույթ աղբյուրների և մասնագիտական գրականության հիման վրա լուսաբանել մի շարք հիմնախնդրային հարցեր.

- Առաջավորասիական գերտերությունների արտաքին և ներքին քաղաքականության այն կարևորագույն գործոնները, որոնք ի վերջո հանգեցրին տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի և քարտեզի ձևափոխմանը:

- Առաջավոր Ասիայի գերտերությունների վերաբերմունքը նվաճված երկրների բնակչության նկատմամբ, այդ քաղաքականության էությունն ու դրսևորումները:

- Գերտերություններում և մասնավորապես Ասորեստանում առկա ներհասարակական խոր հակասությունները և քաղաքական ճգնաժամը:

- Առաջին համահայաստանյան պետության առաջացման և տեղադրության որոշ խնդիրներ: Ցույց տալ այդ հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսությունները և դրա բացահայտմանն ուղղված փորձերը:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը

Ատենախոսության գիտական նորույթը այն է, որ մեծաթիվ գրավոր աղբյուրների և մասնագիտական աշխատությունների օգտագործմամբ փորձ է արվում ցույց տալու Ասորեստանում և Ուրարտուում նվաճված ժողովուրդների նկատմամբ տարվող քաղաքականությունը, նրանց նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև այդ քաղաքականության ազդեցությունը տարածաշրջանի ընդհանուր էթնոժողովրդագրական պատկերի փոփոխության գործում: Ելնելով այն դրույթից, որ ցանկացած իրադարձություն կատարվում է ժամանակի ու տարածության մեջ, Հին Առաջավոր Ասիայում խնդրո առարկա դարաշրջանում տեղի ունեցած էթնոքաղաքական տեղաշարժերը հետազոտել ենք ժամանակի հզորագույն տերությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի արտաքին և ներքին քաղաքականության համապատկերում: Չնայած այն հանգամանքին, որ արտերկրում հիշյալ հիմնախնդրին անդրադարձել են մի շարք մասնագետներ, սակայն պետք է արձանագրել, որ նրանցում հիմնական ուշադրությունը բևեռված էր այդ քաղաքականության կիրառմանը միայն Ասորեստանում¹: Վերոհիշյալ աշխատություններում համակողմանի քննության չի առնված այդ քաղաքականության այլ երկրների մոդելը:

¹Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden 1979.

Ատենախոսությունում ցույց ենք տվել նմանատիպ քաղաքականության կիրառումն Ուրարտուում և պարզաբանել, որ վերաբնակեցումների քաղաքականության ուրարտական մոդելն ավելի երկար պատմություն ունի, քան աստուրականը: Առաջ է քաշվում այդ մոդելի՝ ասորեստանցիների կողմից փոխառման հնարավոր տարբերակը:

Վերհանելով շուրջ երկուսուկես հազարամյակ առաջ Առաջավոր Ասիայի գերտերությունների վարած քաղաքականությունը նվաճված կամ քաղաքական ազդեցության տակ ընկած փոքր պետությունների նկատմամբ և մասնավորապես նրանց վարած վերաբնակեցումների քաղաքականությունը՝ կարելի է միանշանակ արձանագրել, որ նույնիսկ այսօր այդ քաղաքականության մեջ գրեթե ոչինչ չի փոխվել:

Ատենախոսության մեջ կատարված ուսումնասիրություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ինչպես Հայկական լեռնաշխարհի, այնպես էլ Մերձավոր Արևելքի, տվյալ ժամանակահատվածի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում ու ձեռնարկներում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում է պատմաճանաչողությունը՝ սկզբնաղբյուրների և մասնագիտական ուսումնասիրությունների համակարգված պատմաքննական վերհանման ու վերլուծության, ինչպես նաև պատմահամեմատական վերլուծության, համադրման և հակադրման մեթոդաբանական սկզբունքները:

Ուսումնասիրության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնաղայություններն ու եզրակացությունները լուսաբանվել են հայցողի կողմից հրատարակված գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ատենախոսությունը ժամանակագրական առումով սկսվում է Ասորեստանի արքա Սարգոն II-ի (Ք.ա. 721-705 թթ.) Ք.ա. 705 թ. դեպի Թաբալ կատարած արշավանքով և հասցվում մինչև Ք.ա. VI դ. վերջին քառորդը՝ Ք.ա. 522-520 թթ. Պարսից տերության դեմ հպատակ ժողովուրդների ապստամբությունները: Ատենախոսության ժամանակագրական սահմանները պարագծվում են առաջին համահայաստանյան պետականության՝ Ուրարտուի կազմավորման, զարգացման և անկման հիմնախնդիրների շրջանակներում:

Սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության տեսություն

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը կազմում են սեպագիր աղբյուրներն ու հայ և օտար մատենագիրների աշխատությունները: Հասկանալի է, որ մատենագիտական տվյալները հաճախ են հակասում սեպագիր աղբյուրների հաղորդումներին: Այդ պատճառով էլ ուսումնասիրության

ընթացքում գերազանցապես առաջնորդվել ենք փաստարկվածության և վավերականության սկզբունքներով:

Ատենախոսության մեջ օգտագործված աղբյուրներից առանձնակի կարևորություն են ներկայացնում ասորեստանյան արքաների տարեգրությունները², ինչպես նաև գուշակային բնույթի տեքստերը, արքայական նամակներն ու նահանգային կուսակալների ու զորահրամանատարների կողմից արքունիք առաքված գեկուցագրերը³, բաբելոնյան⁴, ուրարտական սեպագիր արձանագրությունները⁵ և այլն:

Արժեքավոր են նաև Աստվածաշնչում պահպանված հիշատակությունները, որոնք մեծամասամբ համաժամանակյա սկզբունքով են շարադրված: Բացի պատմական բնույթի տեքստերից, մեծ ուշադրություն է դարձվել նաև աստվածաշնչյան «մարգարեական» գրքերին⁶:

Օգտագործած աղբյուրների ցանկը եզրափակում են անտիկ հույն և հայ միջնադարյան պատմիչների ստեղծագործությունները: Թեմայի ուսումնասիրության առումով բացառիկ է Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս

² Smith G., History of Sennacherib, London, 1871; Smith S., The First Campaign of Sennacherib, King of Assyria, B. C. 705-681, London, 1921; Luckenbill D.D., The Annals of Sennacherib, Chicago, 1924; Heidel A., The Octagonal Sennacherib Prism in the Iraq Museum, Sumer 9, 1953, pp. 117-188; Campbell Thompson R., The Prisms of Esarhaddon and Ashurbanipal, London, 1931; Borger R., Die Inschriften Esarhaddons, Königs von Assyrien, Graz, 1956; Խոյսի 'Einleitung in die Assyrischen Königsinschriften, Leiden, 1961; Heidel A., A. New Hexagonal Prism of Esarhaddon (676 B.C.), Sumer 12, 1956, pp. 9-37; Luukko M., Van Buylaere G., The Political Correspondence of Esarhaddon, SAA XVI, Helsinki, 2002; Leichty E., The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680-669 BC), The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, vol. 4, Eisenbrauns, 2011; Smith G., History of Assurbanipal, London, 1871; Lau R. J., Langdon S. B. D., The Annals of Ashurbanipal, Semitic Study Series, № II, Leiden, 1903; Streck M., Assurbanipal und die letzten assyrischen Könige bis zum Untergang Nineveh's, Teil I-III, Leipzig, 1916; Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia, vol. II, 1927; Piepkorn A. C., Historical Prism of Ashurbanipal, I, Assyriological Studies, № 5, Chicago, 1933; Cole S. W., Machinist P., Letters from Priests to the Kings Esarhaddon and Assurbanipal, SAA XIII, Helsinki, 1999 և այլն:

³ Harper R.F., Assyrian and Babylonian Letters belonging to the Kouyunjik collection of the British Museum, Chicago, 1892-1911; Knudtzon J.A., Assyrische Gebete an den Sonnengott für Staat und königliches Haus aus der Zeit Esarhaddons und Assurbanipals, Leipzig, 1893; Waterman L., Royal Correspondence of the Assyrian Empire, Ann Arbor, 1930; Pfeiffer R.H., State letters of Assyria, New Haven, 1935; Starr I., Queries to the Sun-god, Divination and politics in Sargonid Assyria, SAA, IV, Helsinki, 1990.

⁴ Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.) in the British Museum, London, 1956; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, New York, 1975; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, և այլն:

⁵ Salvini M., Corpus dei Testi Urartei, I, Roma, 2008; Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001; Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960.

⁶ Աստուածաշունչ մատենա Հին և Նոր Կտակարանների, Կ. Պոլիս, 1896 (արևելահայերեն թարգմանությունը՝ 1989):

Սիկիլացու, Ստրաբոնի, Հովսեփոս Փլավիոսի,⁷ և այլոց երկերի աղբյուրագիտական արժեքը:

Տարածաշրջանի քաղաքական պատմության, ինչպես նաև հայ ժողովրդի կազմավորման ու առաջին համահայկական թագավորության առաջացման գործընթացների վերաբերյալ անգնահատելի են հայ պատմիչներ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»⁸, ինչպես նաև Սեբեոսի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու երկերը⁹:

Հայտնի է, որ պատմական տարբեր ժամանակներում կատարված էթնիկական տեղաշարժերը միշտ էլ շրջադարձային նշանակություն են ունեցել ինչպես այս կամ այն տարածաշրջանի, այնպես էլ ողջ համաշխարհային պատմական զարգացման գործում: Թեև, ի տարբերություն սրանց, էթնոքաղաքական տեղաշարժերը հիմնականում տեղային նշանակություն են ունեցել, սակայն դրանք մշտապես վճռորոշ ազդակ են հանդիսացել պետության ներքաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի զարգացման վրա: Թերևս դա է պատճառը, որ խնդրո առարկա երևույթն իր վրա է գրավել պատմաբանների ու մշակութաբանների ուշադրությունը: Առաջադրված հիմնախնդիրների ուսումնասիրության ընթացքում օգտագործվել և քննության է առնվել մեծ քանակությամբ մասնագիտական գրականություն (315 ամուս):

Մերձավոր Արևելքում և մասնավորապես Ասորեստանում ընթացած գանգվածային վերաբնակեցումների ուսումնասիրության բնագավառում խիստ արժեքավոր են Բ. Օդեդի աշխատությունները¹⁰:

Անիրաժեշտ է նշել նաև Ռ. Գալլահերի¹¹ և Պ. Բեդֆորդի¹² հոդվածները, որոնք իրենց բնույթով որոշակիորեն տարբերվում են նախորդից: Առաջինի մոտ շեշտը դրված է Ասորեստանում վերաբնակեցումների քաղաքականության գաղափարախոսության վրա, իսկ երկրորդում առաջ քաշված խնդիրներն ավելի ընդարձակ են՝ արքայական ինվեստիտուրայից մինչև վերաբնակեցումների քաղաքականության կիրառումը, ասորեստանյան վարչաքաղաքական

⁷Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986;; Քսենոփոն, Անաբասիս, թարգմ., Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970; Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ., Ս. Կրկյաշարյանի, Եր., 2000; Գիողորոս Սիկիլացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, № 14, թարգմ., Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985, Страбон, География. В 17 книгах, пер. И коммент. Г.А. Стратановского, под ред. О.О. Кригера, Л., 1964; Иосиф Флавий, Иудейские древности, в 2-х томах, М., 1996 և այլն:

⁸Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Բնական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ և մեկն. Ս. Տ. Մախասյանի Եր. 1981:

⁹Պատմութիւն Սեբեոսի, քննական բնագիրը՝ Գ.Վ. Աբգարյանի, արևելահայերեն թարգմ. և ծանոթագր.՝ Գ.Կ. Խաչատրյանի և Վ.Ա. Եղիազարյանի, Եր., 2004; Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը, թարգմ. և ծանոթագր.՝ Վ.Ս. Վարդանյանի, Եր., 1985; Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, թարգմ. և ծանոթագր.՝ Գ.Բ. Թոսունյանի, Եր., 1996:

¹⁰Oded B., Observations on Methods of Assyrian Rule in Transjordan after the Tiglath-Pileser III, JNES, 1970, vol. 29, № 3, pp. 177-186.

¹¹Gallagher R. W., Assyrian Deportation Propaganda, SAAB VIII/ 2, 1994, pp. 57-65.

¹²Bedford P., Empire and Exploitation: The Neo-Assyrian Empire, Social Science History Institute, Stanford University, May 21-22, 2001, p. 20-38.

համակարգի առանձնահատկությունները և այլն: Խնդրի հետազոտությունից անմասն չի մնացել նաև ականավոր սեպագրագետ Ա. Գրեյսոնը, ով անդրադարձել է խնդրին Ասորեստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության ուսումնասիրության համատեքստում¹³: Պետք է նշել նաև Գ. Ուայզմանի՝ Ասարխադդոնի կառավարման ժամանակաշրջանի վերաբերյալ ուշագրավ մի հոդվածը և այլն¹⁴: Արևելամիջերկրածովյան ավազանում վերաբնակեցումների քաղաքականության ձևերին ու արդյունքներին ուշադրություն են դարձրել այնպիսի հանրահայտ մասնագետներ, ինչպիսիք են Ա. Մալամաթը, Հ. Թադմորը, Տ.Միքչելը, Ն.Նա՛ամանը, Բ.Իսսերլինը, Յ.Ցիրկինը¹⁵ և այլոք, որոնց աշխատանքները հանգամանորեն քննարկվում են առենախոսությունում: Իսկ մասնավորապես Մարաստանում Ասորեստանի կողմից կատարված վերաբնակեցումների նորագույն շրջանում անդրադարձել է Ս.Ադային¹⁶:

Հին Առաջավոր Ասիայում իրականացված վերաբնակեցումների հիմնախնդրի ուսումնասիրության գործում շոշափելի ներդրում է ունեցել խորհրդային, այդ թվում և խորհրդահայ պատմագրությունը՝ ի դեմս Գ. Դավանցյանի, Գ. Մելիքիշվիլու¹⁷, Բ. Պիտրովսկու, Ն. Հարությունյանի¹⁸, որոնց աշխատություններում վերոհիշյալ հիմնախնդրի նկատմամբ վերաբերմունքը պարագծված է Ուրարտական պետության շրջանակներով: Խնդրին անդրադարձել են նաև մի շարք հայագետ-արևելագետներ՝ Ի. Դյակոնովը, Գ. Սարգսյանը և Ա. Քոսյանը, որոնց ուշադրության շրջանակները գրեթե համընկնում են: Ի. Դյակոնովն իր ուսումնասիրություններում ոչ միայն հանգամանորեն անդրադարձել է խնդրո առարկա ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայում կատարված էթնոքաղաքական տեղաշարժերին, այլև փորձել է տիպաբանական վերլուծության ենթարկել դրանք¹⁹: Ուրարտացիների

¹³Grayson A.K., Assyria: Tiglath-pileser III to Sargon II (744-705 B.C.), CAH, III/2, 1991, pp. 71-102, նույնի՝ Grayson A.K., Assyrian Civilization, CAH, III/2, pp. 194-228.

¹⁴Wiseman D. J., The Vassal-Treaties of Esarhaddon, Iraq, vol. 20, 1958, pp. 1-99.

¹⁵Malamat A., The Last Kings of Judah and the Fall of Jerusalem: An Historical-Chronological Study, IEJ, 1968, № 18, pp. 137-156; Tadmor H., The Aramaization of Assyria: Aspects of Western Impact, in Mesopotamien und seine Nachbarn: Politische und kulturelle Wechselbeziehungen im Alten Vorderasien vom 4. bis 1. Jahrtausend v. Chr., XXV Teil 2, Rencontre Assyriologique Internationale, Berlin, 1982, pp. 449-70; Mitchell T. C., Israel and Judah from the coming of Assyrian Domination until the Fall Samaria, and the Struggle for Independence in Judah (c. 750-700 B.C.), CAH, III/2, 1991, pp. 322-370, նույնի՝ Mitchell T. C., Judah Until the Fall of Jerusalem (c. 700-586 B.C.), CAH, III/2, 1991, pp. 371-409; Na'aman N., Zadok R., Sargon II's Deportations to Israel and Philistia, JCS, 40/1, 1988, pp. 36-46; Isserlin B.S.J., The Israelites, London, 1998; Циркин Ю., История библейских стран, М., 2003.

¹⁶Adali S. F., Ummān-manda and its Significance in the First Millennium B.C., Sydney, 2009.

¹⁷Меликишвили Г.А., Некоторые вопросы социально-экономической истории Наир-Урарту, ВДИ, 1951, № 4, стр. 22-40.

¹⁸Դավանցյան Գր., Ուրարտուի պատմություն, Եր., 1940; Меликишвили Г.А., Наир-Урарту, Тбилиси, 1954; Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), М., 1959; Арутюнян Н. В., Биайнилы (Урарту), военно-политическая история и вопросы топонимикы, Ер., 1970.

¹⁹Дьяконов И. М., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э. Хурриты, лувийцы, протоармяне, (այսուհետ՝ՊԱՏ), Եր., 1968; նույնի՝

կողմից հայերի հնարավոր վերաբնակեցման քաղաքականությունը մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել Գ. Սարգսյանի կողմից²⁰: Հայկական լեռնաշխարհի արևմտյան և Փոքր Ասիայի արևելյան տարածաշրջաններում տեղի ունեցած էթնոքաղաքական տեղաշարժերի, ինչպես նաև վերաբնակեցումների խնդիրն են անդրադարձել նաև Ա. Քոսյանը, Գ. Բ. Լանֆրանկին, Ս. Կ. Սելվիլը, Շ. Յամադան²¹, այլը:

Յեղային վերաբնակեցումների քաղաքականությունը այս կամ այն չափով բնորոշ է եղել խնդրո առարկա դարաշրջանի առաջավորասիական բոլոր տերություններին և կազմել է նրանց արտաքին քաղաքականության ուղղություններից մեկը: Այդ իսկ պատճառով ատենախոսության մեջ մեծ տեղ է հատկացվել Ասորեստան-Բաբելոն, Ասորեստան-Ուրարտու և Ասորեստան-Մարաստան միջպետական հարաբերություններին: Բացի այդ, ատենախոսության մեջ հանգամանորեն ներկայացված են ինչպես Ուրարտուի, այնպես էլ Ասորեստանի անկման գործընթացները: Ատենախոսությունում որոշակի անդրադարձ է կատարվել նաև Առաջավոր Ասիայի պատմական աշխարհագրության և տեղագրության խնդիրներին:

Ուսումնասիրության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է մախարանից, երեք գլուխներից՝ իրենց համապատասխան ենթաբաժիններով, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից. վերջինս ներառում է 3 քարտեզ, 8 նկար, 4 աղյուսակ: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 214 էջ:

ՆԱԽԱԲԱՆ

Նախաբանի մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի գիտական նորույթն ու արդիականությունը, գործնական նշանակությունը, նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, օգտագործված աղբյուրների ու մասնագիտական գրականության տեսությունը:

Типы этнических передвижений в ранней древности (с конца IV по начало I тыс. до н.э.) ДВ, № 4, 1983, стр. 5-23.

²⁰Սարգսյան Գ. Խ., Ուրարտական տերությունը և հայերը, Ուրարտու-Հայաստան, Եր. 1988, էջ 47-126:

²¹ Քոսյան Ա., Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Եր., 1998, նույնի՝ Արամ նահապետը Կապադոկիայում, ՊԲՀ, 1999, № 1, էջ 148-174; Lanfranchi, G. B., The Luwian-Phoenician bilinguals of ÇINEKÖY and KARATEPE: an ideological dialogue, in R. Rollinger, A. Luther and J. Wiesehöfer (eds.), *Getrennte Wege? Kommunikation, Raum und Wahrnehmung in der alten Welt (Oikumene 2)*, Frankfurt: VerlagAntike, 2007, 179-217; Melville, S. C., Kings of Tabal: Politics, Competition, and Conflict in a Contested Periphery, in S. Richardson (ed.), *Rebellions and Peripheries in the Mesopotamian World (American Oriental Series 91)*, Winona Lake: Eisenbrauns, 2010, 87-109; Yamada Sh., *The City of Togarma in Neo-Assyrian Sources*, AFO, 2006, 33/2, pp. 223-236.

ԱՌԱՋԻՆԳԼՈՒՄ

«*Էթնոքաղաքական դրոթյունը Առաջավոր Ասիայում Ք.ա. VIII դարի վերջին և Ք.ա. VII դարի սկզբներին*»։ Գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում («Ձանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Ուրարտում (Ք.ա. VIII–VII դդ.)») մանրամասն լուսաբանված են զանգվածային վերաբնակեցումների աստուրական և ուրարտական մոդելները: Յույց է տրվում, որ տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի փոփոխության լուսաբանման գործում պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նրա ընթացքը շաղկապված էր տարածաշրջանի պետությունների արտաքին և ներքին քաղաքականության հետ: Տարածաշրջանի ընդհանուր պատկերի ներքո կարելի է առանձնացնել երկու կարևոր էթնոքաղաքական գործընթաց. առաջինը՝ Ասորեստանի և Ուրարտուի անկումը, իսկ երկրորդը՝ Մարաստանի ու Բաբելոնիայի նվաճումը պարսիկների կողմից:

Եթե նախկինում Ասորեստանի թագավորները նվաճված տարածքների և նրանց բնակչության նկատմամբ սահմանափակվում էին քաղաքական գերիշխանության հաստատմամբ, որն ամրագրվում էր հատուկ պայմանագրով՝ Ասորեստանի թագավորի և տեղական արքայիկի միջև, ապա բարեփոխումների արդյունքում այն ձեռք բերեց որակական նոր երանգներ: Նոր ներքին և արտաքին քաղաքականությունը ձևավորվեց հնի բացառման արդյունքում: Ասորեստանյան տերության պատմության մեջ սկսվում է մի նոր փուլ, որը կարելի է անվանել *“pax assyriaca”*: Կայսերական գաղափարախոսությունն էլ իր հերթին գործում էր որպես մի մեխանիզմ, որի նպատակը տերությանը որոշակի միասնականություն հաղորդելն էր: Թիզլաթայլասար III-ի (Ք.ա. 745-727 թթ.) վարչական բարեփոխումների արդյունքում՝ նվաճված տարածքների նկատմամբ քաղաքականությունն արմատական փոփոխության ենթարկվեց: Եթե նախկինում նվաճված տարածքները կցվում էին Ասորեստանին որպես կախյալ թագավորություններ և կառավարվում էին փոխարքաների (^{amēl}saknū) կողմից, ապա բարեփոխումների արդյունքում փոխարքայությունները բաժանվեցին ավելի մանր վարչաքաղաքական միավորների՝ մարզերի, որոնք էլ ղեկավարում էին մարզային կառավարիչները (^{amēl}bēl pīhāti): Նվաճված տարածքների և նրանց բնակչության նկատմամբ տարվող քաղաքականությունը հղի էր կործանարար հետևանքներով, սակայն հաջողված էր ուժեղ արքայական իշխանության և կենտրոնաձիգ պետության դեպքում:

Նվաճված տարածքների նկատմամբ ասորեստանցիները վարում էին այսպես կոչված զանգվածային վերաբնակեցումների քաղաքականություն՝ *nasāhu(nasāhu, iss(š)uh)*- «արմատախիլ անել, վռնել, ոչնչացնել և այլն»: nasāhu-ի էությունն այն էր, որ նվաճելով նոր տարածքներ՝ բնակչությանը տեղահանում և վերաբնակեցնում էին հսկայածավալ տերության ծայրամասերում: Իսկ արդեն տեղահանված տարածքներում էլ վերաբնակեցնում էին այլ տարածքների բնակիչներին, որի արդյունքում կտրուկ փոփոխվում էր այդ տարածքների էթնիկական պատկերը: Վերջ ի վերջո nasāhu-ի քաղաքականության կիրառումը, որը հիմնականում քաղաքական նպատակներ էր հետապնդում (այն իրենից մի տեսակ էթնիկական ձուլում կամ

աստուրականացում էր ներկայացնում), չտվեց սպասված արդյունքներ: Հետագայում այն նպաստեց և արագացրեց Ասորեստանի անկման գործընթացը:

Ինչ վերաբերում է *nasāḥu*-ի քաղաքականության կիրառմանն, ապա փորձ է արվել այն համապատասխանեցնել ավելի ուշ շրջանի համապատասխան գործակալության հետ: Եվ եզրակացվել է, որ այդ գերատեսչության ամբողջ պատասխանատվությունն, ըստ երևույթին կենտրոնացած էր *rab ummāni*-ի գործակալության ձեռքում և իրականացվում էր «*mušarkisu*»-ի միջոցով: Ամենայն հավանականությամբ «*rab ummāni*»-ի գործառույթները նման են եղել Աքեմենյան Իրանում և Արշակունյաց Հայաստանում գոյություն ունեցած «*hazarapati*»՝ «հազարապետի» և հունական աղբյուրների հիշատակած *χλίσαρχος*-ի գործառույթներին:

Երևույթի քննությունը ստիպել է ենթադրել, որ արտաքին քաղաքականության մեջ նրա *զանգվածային* կիրառումը որպես այդպիսին առաջին անգամ հանդես է եկել Ուրարտում, և չի բացառվում, որ վերջինից էլ այն փոխառած լինեն ասորեստանցիները: Նույն քաղաքականության «ուրարտական մոդելի» համար կարելի է որոշ վերապահումներով որպես տերմին օգտագործել գրեթե նույն իմաստը կրող ուրարտերեն *tamḥ(u)?*, *tašm(u)?*, *naḥ(u)?* բայերը, իսկ զանգվածային վերաբնակեցումների համար՝ *eršid(u)*, «*eršidu/bil -բնակեցրի*» բայը և «*ešini duni*» «բնակելի դարձրեց» բռակապակցությունը:

Ընդհանրացնելով տեղահանվածների և նրանց վերաբնակեցումների վերաբերյալ վերոշարադրյալը, ինչպես նաև նրանց դասակարգումն ըստ անհրաժեշտության՝ ապա կստացվի հետևյալ պատկերը.

1. Տեղահանված բնակչության մեջ առանձնացվում են փորձառու ռազմիկները, որոնք բաժին էին հասնում արքային և համարյալ էին արքայական գվարդիայի շարքերը:

2. Առանձնացվում էր մասնագիտացած մարդկանց մի խումբ (մասնագիտական կազմը բավական խայտաբղետ է բարձրաստիճան աստիճանավորներից ընդհուպ մինչև հովիվ ու այգեպան) որոնք բաժին են հասնում քրմական դասին և մասնավորապես՝ Աշշուր աստծո տաճարին: Ամենայն հավանականությամբ նույն երևույթն առկա է եղել նաև Ուրարտում, որտեղ ընտրյալների մի խումբ բաժին է հասել գլխավոր աստծո՝ Խալդիի տաճարին:

3. Տեղահանվածների մի մասը բաժին է հանվում արքայական պալատին՝ բաժանվելով պալատականների միջև: Տեղահանված բնակչության իր մասնաբաժինն է ունեցել նաև «արքայական պալատի շրջակայքը»: Այս պարագայում տեղահանվածները կան բաժանվել են «պալատի շրջակայքի» անձանց, կան էլ վերաբնակեցվել են «արքայական պալատի շրջակայքում» և ամրացվել հողին, որպես հակակշիռ աստուրական ռազմական վերնախավի:

4. Տեղահանվածների վերջին մասը տրվում է խոշորագույն քաղաքներին:

Չանգվածային վերաբնակեցումների արդյունքում, ճիշտ է, փոփոխվում էր տվյալ տարածաշրջանի էթնիկական պատկերը, և նվազում էր վերաբնակվողների ընթուստության հավանականությունը, այս էլ միայն ուժեղ

ռազմական մեքենայի պարագայում, սակայն նույն մեքենայի քայքայումը հանգեցրեց աղետալի իրավիճակների՝ Ասորեստանի և Ուրարտուի անկմանը:

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է գալ այն հետևության, որ զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը միանշանակ հետևանքներ չեն ունեցել ո՛չ Ասորեստանի, ո՛չ Ուրարտուի, ոչ էլ անգամ Նոր Բաբելոնական թագավորության պատմական ճակատագրերի վրա: Անշուշտ, այդ քաղաքականությունը իրական նախադրյալներ ստեղծեց վերոնշյալ տերությունների ժամանակավոր ռազմաքաղաքական վերելքի համար՝ նվազեցնելով նորանվաճ երկրամասերի և վերաբնակեցված խմբերի ընթոստության հավանականությունը: Սակայն, ակնհայտ են նաև այդ քաղաքականության բացասական կողմերը. վերաբնակեցումների ընթացքում վերաբնակեցված էթնիկական հանրությունները միշտ չէ որ հաջողությամբ ասիմիլացվում էին, և կատարելապես ադապտացվում իրենց բնակության նոր պայմաններին: Վերաբնակեցումների արդյունքում հիշյալ երեք տերություններում ստեղծված էթնոքաղաքական նոր իրադրությունը որոշակի չափով նպաստել է դրանց թուլացման և անկման գործընթացին:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Մինախետերիքը (Ք.ա. 705-681 թթ.) և հակասորեստանյան խմբավորումները»:** Այս ենթագլուխը նվիրված է Ասորեստանի արքա Մինախետերիքի արտաքին և ներքին քաղաքականության բացահայտմանը: Ք.ա. 705թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի դեպի Փոքր Ասիա կատարած արշավանքն ասորեստանցիների համար աղետալի հետևանքներ ունեցավ: Թաքալում կուլումմացի Գուրդիի դեմ նրա մղած ճակատամարտն ավարտվեց ասորեստանցիների պարտությամբ, Սարգոն ը գոհվեց: Սարգոն II-ից հետո գահ բարձրացավ նրա որդին՝ Մինախետերիքը (Ք.ա. 705-681թթ.): Դեռևս Թիգլաթպալասար III-ի ռազմավարչական վերափոխություններից ի վեր Ասորեստանի ներքաղաքական կյանքում նշմարվող որոշ միտումներ նրա օրոք դարձան իրողություններ: Պայանավորված Թիգլաթպալասար III-ի և Սալմանասար V-ի օրոք Ասորեստանի արտաքին և ներքին քաղաքականության ասպարեզում արմատական փոփոխություններով, հասարակության մեջ ստեղծվեցին երկու հակադիր խմբավորումներ, որոնց պայմանականորեն կոչել ենք «ասսուրասեր» և «բաբելոնամետ» անուններով: Մինախետերիքն Ասորեստանի հակասական և եռանդուն տիրակալներից մեկն էր: Նա հարում էր «ասսուրական» ռազմական խմբավորմանը: Ակնհայտ էր նրա բացասական վերաբերմունքը թե՛ քրմերի և թե՛ արտոնյալ քաղաքների նկատմամբ: Մինախետերիքի կառավարման հենց առաջին տարում Ասորեստանի առջև ծառայեցան նոր խնդիրներ: Եվ չնայած այն բանին, որ ասորեստանյան զորքերը հաղթանակ էին տանում մեկը մյուսի ետևից, միևնույն է, կարևոր միջազգային խնդիրներն այդպես էլ մնացին չլուծված: Ասորեստանի անմիջական հարևանները՝ Ուրարտուն, Բաբելոնը, Էլամը և Եգիպտոսը ձգտում էին վերականգնել իրենց նախկին դիրքերը Առաջավոր Ասիայում: Տարածաշրջանի գրեթե բոլոր պետությունները ստեղծում էին հակասորեստանյան խմբավորումներ:

Ընդհանրացնելով Մինախետերիքի կառավարման ժամանակաշրջանում Ասորեստանի արտաքին քաղաքական իրադրությունը, նշվում է, որ այն թեև

բնութագրվում էր գերլարվածությամբ, սակայն նրան հաջողվեց հաղթահարել դժվարությունները և պարտության մատնել հակաստրեստանյան խմբավորումներին թե՛ հարավում, թե՛ արևմուտքում: Մինախիսերիբի հաղթական պատերազմները, որոնք ուղեկցվում էին զանգվածային վերաբնակեցումներով, ուղղակի շարունակությունն էր Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական իրավիճակի փոփոխության այն մեծ շարժընթացի, որի սկիզբը դրել էր դետևա Թիզլաթպալասար III-ը: Այսպիսով, Մինախիսերիբի կառավարման ժամանակաշրջանում աստուրական ռազմական մեքենան գործում էր առավել ակտիվ, իսկ նրա ներքին քաղաքականությունն ուղղված էր կայսերական իշխանության ամրապնդմանը և միաժամանակ քրմության և ազնվականության իշխանության թուլացմանը: Մինախիսերիբի այս քաղաքականության հետևանքները երկար սպասեցնել չտվեցին՝ նա զոհ գնաց պալատական հեղաշրջմանը:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Ասորեստանի արշավանքները դեպի տերության հյուսիս-արևմտյան շրջաններ և աստուրա-ուրարտական փոխհարաբերությունները»**, որտեղ փորձ է արվել հանգամանորեն վերլուծել մասնավորապես աստուրա-ուրարտական հարաբերությունները: Յուրյ է տրվել, որ Մինախիսերիբի կառավարման ժամանակաշրջանում աստուրա-ուրարտական փոխհարաբերությունները, ըստ երևույթին չի կարելի բարեկամական համարել. ավելին, կան բավարար հիմքեր որպեսզի այն որակվի որպես պայթյունավտանգ: Այս լարված մթնոլորտում, սակայն, ուրարտա-ասորեստանյան ռազմական լուրջ բախում տեղի չունեցավ:

Ք.ա. 714 թ. Սարգոն II-ի դեպի Ուրարտու կատարած արշավանքը խարխլեց վերջինիս հիմքերը, որն էլ վերջին հաշվով ազդեց Առաջավոր Ասիայում ուրարտական պետության դերի ու հեղինակության վրա: Այդ արշավանքի արդյունքում Ուրարտուն կորցրեց նաև մերձօրմյան մի շարք տիրույթներ: Ռուսա I-ի (Ք.ա. 735-714/713 թթ.) որդի Արգիշտի II-ը (Ք.ա. 714/713-685? թթ.) փորձում էր ետ բերել տերության խարխլված հեղինակությունը, որը սակայն արդեն անվերադարձ կորսված էր. Ուրարտուն մեկընդմիջտ մղվել էր երկրորդական դիրք: Ելնելով դեսպերի հետագա ընթացքից՝ ենթադրվում է, որ Ռուսա I-ին հաջորդած Արգիշտի II-ը և վերջինիս որդի Ռուսա II-ը (Ք.ա. 685?-660? թթ.) Առաջավոր Ասիայում փորձել են վարել այսպես կոչված համեմատական հավասարակշռության քաղաքականություն:

Խնդիրն այլ էր տերության հյուսիս-արևմտյան նահանգներում և Փոքր Ասիայի արևելյան շրջաններում: Ք.ա. 705 թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի դեպի Փոքր Ասիա կատարած արշավանքն ասորեստանցիների համար աղետալի հետևանքներ ունեցավ: Ասորեստանցիների պարտությունից հետո ասորեստանյան իշխանությունը նրա սիրիական և փոքրասիական տիրույթներում խաթարվեց: Տարածաշրջանում իր գերիշխանությունը վերականգնելու համար, Մինախիսերիբը կատարեց երկու արշավանք՝ Ք.ա. 696 և Ք.ա. 695 թթ.: Տարածաշրջանում նախկին լուվիական պետությունների փոխարեն հանդես է գալիս բավականին կենսունակ նոր էթնոքաղաքական միավոր Թիլ-Գարիմմուն («Տուն Թորգոման»): Վերջինիս ձևավորման գործընթացին, ըստ երևույթին, նպաստել է նաև ասորեստանյան

գերիշխանության անկումն ու Ուրարտուի դեպի արևմուտք ագրեսիայի բացակայությունը: Դեռ ավելին՝ ասորեստանցիներին այդպես էլ չի հաջողվել կասեցնել նրանց առաջխաղացումը դեպի հարավ-արևելք և արևելք՝ դեպի Եփրատ գետի ձախ ավիր:

Նշվել է, որ Բլլուբրուի (Կիլիկյան Հայաստանի Լամբրոնը և այսօրվա Նեմրոնը) կառավարիչ Կիրուայի հարձակումը Խիլակկուի վրա զուտ պատահական կամ զավթողական պատերազմ չպետք է համարել: Պայմանավորված իր հարմար աշխարհագրական դիրքով՝ Խիլակկուն Ասորեստանի համար ծառայում էր, որպես հենակետ՝ դեպի արևելյան Փոքր Ասիա արշավանք կատարելու համար: Իսկ տարածաշրջանում հակաասորեստանյան խմբավորման գոյության դեպքում՝ Խիլակկուի չեզոքությունը կամ Ասորեստանին հավատարիմ մնալը կարող էր վտանգել տարածաշրջանում հակաասորեստանյան ուժերի շահերը: Այդ տրամաբանությամբ ատենախոսը Խիլակկուի վրա հարձակումը հակված է կապելու Արևելյան Փոքր Ասիայում հակաասորեստանյան տրամադրությունների ծավալման հետ: Թերևս, սրանով էր պայմանավորված մա. Ք.ա. 695 թ. Սինախիերիբի՝ դեպի Թիլ-Գարիմմու կատարած արշավանք:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Էթնոքաղաքական տեղաշարժերն Առաջավոր Ասիայում Ասորեստանի գերիշխանության ժամանակաշրջանում (Ք.ա. 681-627 թթ.)»: Գլուխը բաղկացած է 3 ենթագլխից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է **«Ասարխադդոնի (Ք.ա. 681-669 թթ.) փոխգիջման քաղաքականությունը»:** Ասարխադդոնի կառավարման առաջին տարիներից նեթ ակնհայտ դարձավ այն խոր ճգնաժամն ու հակասություններն արտաքին քաղաքականության բնագավառում, որոնք սկսվել էին դեռևս նախորդ դարի վերջին քառորդից: Ի թիվս այլ տարածաշրջանների, որտեղ քաղաքական անկայունությունն ու կենտրոնախույս դրսևորումներն իրենց վերջնական հանգուցալուծմանն էին սպասում՝ Ասորեստանի համար լուրջ խնդիրներ ի հայտ եկան տերության արևմտյան և արևելյան նահանգներում: Ինչ վերաբերում է ասսուրա-ուրարտական հարաբերություններին, ցույց է տրվում, որ շարունակվում էր պահպանվել *status quo*-ն: Մեծ ուշադրություն է դարձված Ասարխադդոնի Ք.ա. 673/2 թ.-ին դեպի Շուբրիա կատարած արշավանքին, Ռուսա II-ի արշավանքին դեպի անդրեփրատյան տարածքներ և Ք.ա. 672 թ. մարտի հակաասորեստանյան ապստամբությանը: Հեղինակն աղբյուրների համադրության արդյունքում եզրակացնում է, որ Ք.ա. 670-ական թվականների երկրորդ կեսին ինչպես ուրարտական արշավանքը դեպի անդրեփրատյան տարածաշրջաններ, այնպես էլ ասորեստանյան արշավանքը դեպի Շուբրիա՝ իրականում ուներ մեկ միտում՝ կանխել արևմուտքից դեպի տերության խորքերը «Տուն Թորգոմայ» պետության հավանական ներխուժումը: Վերջինս դեռևս նախորդ դարի վերջերից կարողացել էր ազդեցիկ դիրք գրավել Արևելյան Փոքր Ասիայում և այժմ փորձում էր տարածվել ավելի հարավ-արևելք ու արևելք՝ անմիջականորեն լուրջ սպառնալիք հանդիսանալով և՛ Ասորեստանի, և թե՛ Ուրարտուի համար: Ատենախոսը եզրակացնում է, որ ակնհայտորեն

պատճառահետևանքային ուղղակի կապ պետք է տեսնել Արևելյան Փոքր Ասիայում՝ Մելիդ-Թաբայան պետության և նրան հարող տարածքներում նկատվող էթնոքաղաքական մեծ ակտիվության և Ասարխադդոնի՝ Ք.ա. 675 թ. դեպի Մելիդ և Ք.ա. 673 թ. դեպի Շուբրիա կատարած արշավանքների, ինչպես նաև Ռուսա II-ի Ք.ա. 673/672 թ. վերոհիշյալ արշավանքի միջև: Թերագնահատել այդ գործունեների դերն ու նշանակությունը, ինչպես նաև իրադարձությունների զարգացման կոնկրետ ուղղորդվածությունը՝ ոչ մի դեպքում չի կարելի: Ակնհայտ է որ Ք.ա. VIII դ. վերջին քառորդում Արևելյան Փոքր Ասիայում «Տուն Թորգոմայ» պետության գլխավորությամբ սկսված էթնոքաղաքական գործընթացները շարունակական բնույթ են ունեցել: Լինելով բավական կենսունակ և հաջողությամբ դիմակայելով Ասորեստանին՝ «Տուն Թորգոման» փորձել է ընդլայնել իր սահմանները շախարհագրական բոլոր ուղղություններով: Ելնելով մի կողմից տարածաշրջանում հայտնված կիմմերների ակտիվ գործունեության, մյուս կողմից՝ «Տուն Թորգոմայ» պետության նկատմամբ նրանց ակնհայտ ոչ թշնամական վերաբերմունքի, և վերջապես, մի փոքր անց նրանց գործունեության ուղղության տարբերակման փաստերից՝ նշվում է, որ նրանց միջև կայացել է տարածաշրջանում ազդեցության ոլորտների բաժանում: Ըստ այդմ, կիմմերներն անկաշկանդ գործունեության հնարավորություն են ստացել «Տուն Թորգոմայ»-ից արևմուտք՝ Փոքր Ասիայում՝ քիկունքում ունենալով դաշնակից «Տուն Թորգոմայ»-ն, իսկ վերջինիս բաժին էր հասնելու հարավից և արևելքից իրեն հարող տարածաշրջանները: Կիմմերների և «Տուն Թորգոմայ»-ի միջև ազդեցության գոտիների և ծավալվելու ուղղությունների վերաբերյալ համաձայնությունը բնականաբար սպառնալիքներ էր ստեղծելու թե՛ Ուրարտուի, թե՛ Ասորեստանի արևմտյան տիրույթների նկատմամբ:

Ք.ա. 675 թ. և Ք.ա. 674 թ. նախ՝ Մելիդի արքա Մուգալլուի, ապա Եգիպտոսի դեմ Ասարխադդոնի կատարած երկու արշավանքների անհաջողությունը ծանր կացության մեջ էր դնում Ասորեստանին: Դրանով կարելի է բացատրել այն իրողությունը, որ «Տուն Թորգոմայ»-ի ռազմաքաղաքական ակտիվությանը Ասորեստանը պատասխանեց ոչ թե համարժեքորեն, այլ ակտիվ պաշտպանության մարտավարությամբ՝ Շուբրիայի նվաճումով: Վերջինիս վիճակված էր դառնալու Ասորեստանի հուսալի պատվարը՝ ընդդեմ հյուսիսից եկող ցանկացած հարձակման

Այսպիսով, վերոհիշյալ երկու արշավանքներն էլ միտված են եղել միևնույն նպատակին՝ կասեցնել վերոհիշյալ պետության արշավանքը դեպի պետության խորքերը: Եթե Ասորեստանն ինչ-որ չափով կարողացավ լուծել այդ խնդիրը, ապա նույնը չի կարելի ասել Ուրարտուի վերաբերյալ, որն ընդամենը մեկ-երկու տասնամյակ անց դադարելու էր հանդես գալ որպես մեկ միասնական պետություն:

Անդրադարձ է կատարվել նաև տերության արևելյան նահանգներում բռնկված մարերի հակասորեստանյան խոշոր ապստամբությանը: Եզրակացվում է, որ մարերի հակասորեստանյան ելույթը պետք է թվագրվի Շուբրիայի նվաճումից հետո ընկած տարիներով, ինչպես վկայում են Ասարխադդոնի (Ք.ա. 681-669 թթ.) արձանագրությունների տվյալները՝ Ք.ա. 672 թ.: Իսկ Շուբրիայի նվաճումն ու Ռուսա II-ի օրոք՝ Ք.ա. 673/672 թ.

ուրարտացիների կողմից դեպի Եփրատի ավազանը կատարած արշավանքն իր հերթին պայմանավորված էր «Տուն Թորգոմայ» պետության ակտիվությամբ: Անդրադարձ է կատարվել նաև Ուրարտական պետության անկման խնդրին:

Երկրորդ ենթագլխում «Առաջավոր Ասիան Աշշուրբանապալի (Ք.ա. 669-627 թթ.) կառավարման ժամանակաշրջանում» հանգամանորեն ներկայացված են Աշշուրբանապալի կառավարման շրջանում տեղ գտած միջազգային կարևորագույն իրադարձությունները: Նրա կառավարման առաջին կեսին Ասորեստանը գտնվում էր իր հզորության գագաթնակետին և տարածքային առումով հասել էր իր առավելագույն չափերին: Միաժամանակ նրա օրոք առկա էին այն խոր հակասությունները սոցիալ-տնտեսական և քաղաքական բնագավառներում, որոնք տերությունը կանգնեցրին քայքայման եզրին:

Աշշուրբանապալն իր կառավարման հաջորդ կեսին ականատես եղավ իր պետության քայքայմանը: Տերության ծայրամասերը անկախություն ձեռք բերեցին: Իսկ պայքարն ասորեստանյան և բաբելոնյան խմբավորումների միջև ավարտվեց վերջինիս հաղթանակով:

Անդրադարձ է կատարվել նաև Աշշուրբանապալի կառավարման ժամանակահատվածում ասուրա-ուրարտական հարաբերությունների կարգավիճակին և եզրակացվել, որ տվյալ ժամանակաշրջանում Ուրարտուն ակնհայտորեն հայտնվելով քաղաքական գերծանր պայմաններում՝ փրկության ելքը տեսել է Ասորեստանի հովանավորության և աջակցության մեջ և դրա ակնկալությամբ (Ք.ա. 653/652 թթ. և Ք.ա. 643/642 թթ.) միջոցով Ասորեստանին հավաստել է իր հպատակությունն ու հավատարմությունը:

Ք.ա. 643/642թթ. ուրարտական դեսպանության առումով Աշշուրբանապալը (Ք.ա. 669-627 թթ.) նշում է, որ նախկինում ուրարտական արքաներն իր նախնիներին եղբայրական ողջույններ էին ուղարկում, իսկ այժմ Սարդուրին (Սարդուրի III/IV? Սարդուրորդու?) «*ki-ma ša mârû a-na abû-šu*» «ինչպես որդին իր հորը»²² գրում է՝ «*lu-u šulmu-mu a-na šarri bêli-ia*» «Ողջու՛յն թագավորին՝ իմ տիրոջը»²³ և ուղարկում նվերներ: Ինչ վերաբերում է դեսպանության արդյունքներին, ապա ինչպես հնագույն և հին, նույնպես և միջնադարյան դիվանագիտության մեջ երկու տիրակալների հարաբերություններում «եղբայր-եղբայր» փոխադարձ դիմելաձևը արտահայտում էր երկուսի կատարյալ իրավահավասարությունը: Աշշուրբանապալի վերոնշյալ արձանագրության հաղորդած փաստից և հին արևելյան վիճագրության մեջ նրա բազմաթիվ զուգահեռներից պարզորոշ երևում է, որ միջպետական հարաբերություններում երկու տիրակալների «եղբայր-եղբորը» փոխադարձ դիմելաձևը հատուկ է եղել միմյանցից կատարելապես անկախ տիրակալներին: Դիվանագիտական էտիկետի այս նորմը, ինչպես երևում է, հարատևել է նաև հետագայում. այսպես էին մինյանց դիմում հեղինախտական միապետները, ավելի ուշ՝ պարսից արքաներն ու հռոմեական կայսրերը: Մինչդեռ «հայր-որդի» դիմելաձևը, ինչպես որ արձանագրություններում և մատենագրության մեջ զուգահեռ իմաստը

²² Lau R. J., Langdon S. B. D., The Annals of Ashurbanapal, Cylinder A, Col. X, l. 45.

²³ Նույն տեղում՝ Cylinder A, Col. X, ll. 47-48.

պարունակող «տեր-ծառա», «աստված-հետևորդ» և այլ դիմելիքները, արդեն իսկ ուրվագծում է ուղղահայաց մի հարաբերություն, որտեղ ակնհայտ է առաջինների գերակայությունը: Եզրակացվել է, որ ըստ էության, աստուրա-ուրարտական դիվանագիտության այդ արարողակարգային փոփոխությամբ էլ պետք է փակված համարել Ուրարտուի փառահեղ պատմության վերջին էջը:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Կիմներներն ու սկյութներն Առաջավոր Ասիայում և սկյութների 28-ամյա գերիշխանության հիմնախնդիրը»:**

Հատուկ ուշադրություն է դարձվել կիմներների և սկյութների ինչպես տեղաձարժերին, այնպես էլ Առաջավոր Ասիայում նրանց գործունեությանը: Ելնելով սեպագիր աղբյուրների ընձեռած հնարավորություններից՝ հեղինակը եզրակացնում է, որ սկյութները Առաջավոր Ասիայում իրենցից այդքան էլ շոշափելի ուժ չէին ներկայացնում, ինչպես փորձում են ցույց տալ հույն պատմիչները և այլք: Ակնհայտ է, որ սկյութների մուտքը Առաջավոր չի կարելի արշավանք անվանել. նրանց ներխուժումը ավելի շուտ գաղթ է հիշեցնում՝ վերաբնակեցման նպատակով: Իսկ այս պարագայում «վերաբնակեցում» տերմինը հանդես է գալիս ոչ թե ուղիղ իմաստով, այլ որպես ավարառություն: Վերաբնակեցումների և գաղթերի համար որպես պատճառ կարող էր լինել և «ժողովրդագրական պայթյունը»՝ բնակչության շեշտակի աճը, և թե սկյութական հասարակության անցումը «ռազմական դեմոկրատիայի», իսկ վերջինիս համար պատերազմներն ու թալանը հանդես են գալիս որպես «արտադրության եղանակ», առօրյա զբաղմունք: Մակայն պատերազմներն ու թալանը, որպես կանոն, ժողովրդի գաղթի և վերաբնակեցման նպատակ չեն կարող հանդիսանալ: Վերաբնակեցումները ուղեկցվում են պատերազմներով ու թալանով, այլ ոչ թե հանդիսանում վերջիններիս պատճառ: Իսկ այդպիսի պատճառ կարող են հանդիսանալ կլիմայական փոփոխությունները:

Բավական լուրջ խնդիրներ կան նաև Առաջավոր Ասիայում «վերաբնակեցվող» սկյութական ցեղերի թվաքանակի ու կազմի վերաբերյալ: Որոշ մասնագետներ կարծում են, որ Ասիա ներխուժած սկյութների մեծամասնությունը բացառապես եղել են տղամարդիկ, իսկ ոմանք գտնում են, որ նրանց հետ եղել են նաև գումակներ՝ ընտանիքի անդամներով հանդերձ: Մեզ ավելի հավանական է թվում վերջին տարբերակը: Ի հաստատումն վերոշարադրյալի՝ հիշենք արաբների, քյուրքերի և մոնղոլ-թաթարների արշավանքները: Սկզբնապես դրանք հետախուզական բնույթ էին կրում և բաղկացած էին բացառապես հեծյալ ռազմիկներից: Սկյութների առումով նույնը արձանագրված չէ, և հետևաբար նրանք չունեին բավարար ռազմական ներուժ Առաջավոր Ասիային տիրելու համար: Հետևաբար չափազանցեցված է նաև Հերոդոտոսի հաղորդումը սկյութների 28-ամյա իշխանության մասին Առաջավոր Ասիայում: Այն ավելի շուտ վերաբերել է կիմներների իշխանությանը Փոքր Ասիայում, որի մասին հույներն իրականում ավելի քաջատեղյակ էին: Հին Արևելքի երկրների ռազմաքաղաքական կյանքում սկյութների դերակատարությունը արդյունք էր Հերոդոտոսի կողմից Ք.ա. VI-V դդ. իրական պատմության տեղափոխումը Ք.ա. VII դ:

Ք.ա. VI դ. վերջին Աբեմենյան արքա Դարեհ I-ի (Ք.ա. 521-486 թթ.) կողմից Սկյութիա կատարած անհաջող արշավանքից հետո սկյութների համբավը

տարածվել էր Հունաստանով մեկ: Բացի այդ, հնարավոր է, որ Հերոդոտոսը միտումնավոր է լռության մատնում կիմմերների վերաբերյալ պատմությունները, որովհետև հզոր սկյութների մասին պատկերացումների լույսի ներքո նրանք չէին տեղավորվում:

ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒՑ

«ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԶԵՎՈՒՄՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅՈՒՄ Ք.Ա. VII ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ ԵՎ Ք.Ա. VI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ»: Գլուխը բաղկացած է 3 ենթագլխից:

Առաջին ենթագլխում («Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին և Աշշուր-էտի-իլանիի ու Մին-շար-իշկունի գահակալման հիմնախնդիրը») առկա աղբյուրների պայմաններում հանգամանորեն ներկայացված են Աշշուրբանապալի կառավարման վերջին ժամանակահատվածը: Ատրեստանի պատմության վերջին շրջանի պարզաբանման համար խիստ կարևոր է նաև Աշշուրբանապալի կառավարման վերջին տարվա թվագրումը: Չնայած Աշշուրբանապալի և նրա հաջորդների վերաբերյալ բազում գիտական աշխատություններ ու հոդվածներ են գրվել՝ այդուհանդերձ, մասնագիտական գրականության մեջ նրա գահակալության ժամանակագրության վերաբերյալ կարելի է հանդիպել տարաբնույթ ու իրարամերձ կարծիքների: Մինչև 1956 թ. մասնագիտական գրականության մեջ Աշշուրբանապալի մահվան թվականը սովորաբար նշվում էր մոտ. Ք.ա. 633 թ., սակայն 1956 թ. Ֆիլադելֆիայի համալսարանի թանգարանում պահվող Նիպպուրից հայտնի № 4016 արձանագրությունը, թվագրված Աշշուրբանապալի կառավարման 38 տարով՝ Միմանու ամսի 20-ին, այսինքն՝ Ք.ա. 631 թ. հունիսի 5-ով՝ եկավ մերժելու վերոհիշյալ թվագրումը: Վերոհիշյալ թվագրումից գատ, կա նաև այլ տարբերակ, ըստ որի Նիպպուրի արձանագրությունը թվագրվում է Ք.ա. 631 թ. մարտի 20-ով: Չնայած այն հանգամանքին, որ այս արձանագրությունը համարվում է Աշշուրբանապալի կառավարման տարով թվագրված **մեզ հայտնի վերջին** արձանագրությունը, այն չի վկայում, որ Աշշուրբանապալը մահացել է հենց այդ տարում և հետևաբար նրա կառավարման համար որպես վերջին տարի Ք.ա. 631 թ. ընդունումը գուրկ է փաստական որևէ հիմքից:

Հեղինակը հիմք ընդունելով Բաբելոնիայի արքա Նաբոնիդի (Ք.ա. 556-539 թթ.) մոր Ադդա-գուպպիի տապանագիր արձանագրության տվյալները, ըստ որի Աշշուրբանապալը կառավարել է 42 տարի՝ եզրակացնում է, որ Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին պետք է թվագրվի Ք.ա. 627 թվականով, և մինչև նոր փաստերի հայտնաբերումը, որը միաժամանակ կժխտի նաև վերոնշյալ արձանագրության տվյալները՝ պետք է հիմք ընդունել վերոնշյալ թվագրումը: Դեռ ավելին՝ հեղինակը հանգում է, որ չկան բավարար փաստեր, ըստ որի հնարավոր կլինե՞ր բացառել Աշշուրբանապալի Կանդականու անվան տակ գահակալումը Բաբելոնիայում:

Երկրորդ ենթագլխում («Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունն ու Նոր Բաբելական թագավորությունը») հանգամանորեն լուսաբանված է ասսուրա-բաբելոնյան հակամարտության Ք.ա. 626-610 թթ.-ի պատմության ամբողջ ընթացքը: Առաջավոր Ասիան ցնցվում էր պատերազմներից, որոնք ընթանում էին

գրեթե ամենուրեք՝ ստրեստանյան և հակաստրեստանյան խմբավորումների միջև: Այդ պատերազմների թիրախը հոգեվարք ապրող Ասորեստանն էր:

Ք.ա. 627 թ. մահացավ Աշշուրբանասպալը և նրան կարճ ժամանակով հաջորդեց որդին՝ Աշշուր-էտիլ-իլանին: Աշշուրբանասպալից հետո Ասորեստանը հայտնվեց քաղաքական բառափ մեջ՝ երկրում սկսեց մոլեգնել քաղաքացիական պատերազմը: Ասորեստանի գահի համար մղվող պայքարն արդյունքում հանգեցրեց հսկայածավալ կայսրության տրոհմանը: Ասորեստանում միաժամանակ հայտնվեցին մի քանի գահակալներ, որոնք սակայն ձևակերպեցին կախման մեջ էին Նինվեից: Սակայն այլևս ոչինչ չէր կարող օգնել և շատ չանցած ապստամբեցին մի շարք հպատակ երկրների կառավարիչներ: Հարմար առիթը բաց չթողեց նաև Ծովի երկրի՝ Բիթ-Յակինի կառավարիչ քաղղեսցի Նաբոպալասարը: Օգտվելով Ասորեստանում տիրող խառնակ վիճակից, Նաբոպալասարն ապստամբեց և գրավեց Ուրուկ քաղաքը, իսկ քիչ անց պաշարեց Նիպպուրը: Շուտով Նաբոպալասարին հաջողվեց մտնել Բաբելոն և պաշտոնապես հռչակվել Բաբելոնի թագավոր (Ք.ա. 625-605 թթ.), հիմք դնելով՝ Նորբաբելական կամ Քաղղեսական հարստությանը (Ք.ա. 625-539 թթ.):

Աղբյուրների համադրման արդյունքում ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ Ասորեստանի դեմ պայքարում առաջնակարգ դերը պատկանում է Բաբելոնիային: Ք.ա. 614 թ. Ք.ա. 612 թ. ընկավ Ասորեստանի մայրաքաղաք Նինվեյն, իսկ Ասորեստանի հաջորդ և վերջին թագավորը՝ Աշշուրուբալիսա II-ը (Ք.ա. 612-607/605? թթ.) թագավոր հռչակվեց Խառան քաղաքում, որտեղ նա, ըստ երևույթին, եղել է Էխուլխուլի՝ Խառանի Լուսնի աստված Սինի տաճարի քուրմ:

Նինվեի անկումից հետո Ասորեստանի դեմ նրա հյուսիս-արևմտյան մահանգներում և մասնավորապես Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մահանգներում՝ ռազմական գործողությունները վարում էին բացառապես բաբելոնյան ուժերը: Թերևս միակ բացառությունը Ք.ա. 610 թ. Խառան քաղաքի գրավումն էր: Քաղաքի գրավման ժամանակ մարերը մեկ անգամ ևս օգնեցին բաբելոնացիներին: Հեղինակի եզրակացությունն այն է, որ ստրեստանյան ժառանգության բաժանման ժամանակ Հյուսիսային Միջագետքը չէր կարող անցնել Մարաստանին: Այդ պայքարից առյուծի բաժինը հասել է Բաբելոնիային:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Էթնոքաղաքական դրությունն Առաջավոր Ասիայում Ք.ա. VI դարի առաջին կեսին և համահայկական պետության հիմնախնդիրը»**: Այս ենթագլխի առաջին մասը նվիրված է բաբելոնյան գորբերի դեպի Հայկական լեռնաշխարհի հարող շրջաններ կատարած արշավանքների մանրագնին ուսումնասիրությանը: Ենթագլխի հաջորդ մասը նվիրված է նորբաբելական թագավորության քաղաքացիական պատմությանը, որպես առաջավորասիական գլխավոր գործոնի, վերջինիս անկման գործընթացին ու Պարսից տերության կազմավորմանը:

Հեղինակի կարծիքով, միանշանակ է, որ բաբելոնացիների երեք՝ Ք.ա. 609 թ. դեպի Իզալայի շրջան, Ք.ա. 608 թ. դեպի Բիթ-Խառնոնիայի լեռների շրջան և Ք.ա. 607 թ. դեպի «adi pi-[hat] (tam-[tim?]» «մինչև ծովի շրջան» (պատմագրության մեջ միանշանակորեն ընդունված «մինչև Վանա ծովի շրջան»

վերականգնումը հեղինակի համար ընդունելի չեն: Եթե այդպիսի վերականգնումն անգամ համապատասխանում է իրականությանը, ապա ենթադրվում է, որ խոսքը կարող է վերաբերել Շուա (հայկական Շովքը, ներկայիս Գ-յուջուկը) լճին Մեծ Հայքի Շուփը նահանգի Անձիտ գավառում) արշավանքներն էլ իրականում ուղղված էին Ասորեստանի երբեմնի աշխարհակալ տերության վերջին մնացուկների վերացմանը, իսկ ռազմական թատերաբեմը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանում: Իսկ ինչ վերաբերում է Ք.ա. 608 թ. Բիթ-Խանունիայի լեռների հիշատակությանը՝ կապված այդ շրջանում («Bit-^mĤa-a-nu-ni-ia pi-Ĥat^mÚ-ra-áš-Ĥa»«Ուրարտու երկրի շրջանում») բաբելյական գորբերի ռազմական գործողությունների հետ, ապա ատենախոսի կարծիքով այն համապատասխանում է «Աշխարհացոյցյան» Աղձնիք նահանգի Անգեղոտուն կամ էլ այդ նահանգի որևէ այլ գավառին: Իսկ «Ուրարտուի շրջան» արտահայտությունը հանդես է գալիս որպես աշխարհագրական անվանում և ոչ մի կապ չունի Ք.ա. VII դարի 3-րդ քառորդում սկզբնապես տրոհված, ապա և վերացած Ուրարտական թագավորության հետ: Եվ վերջին հաշվով Ուրարտուն անկում ապրեց ոչ թե այն պատճառով, որ այն գրավեց և իրեն ենթարկեց Մարաստանը, ինչպես ընդունված է ցայսօր, այլ, հավանաբար, հայկական «Տուն Թորգոմայ» պետությունը: Այս պետությունը կազմավորվելով Հայկական լեռնաշխարհի արևմտյան նահանգներում, Ուրարտական տերության մասնատումը կարողացավ օգտագործել դեպի արևելք ծավալվելու համար: Հետագայում այն արդեն պետք է հանդես գար որպես հայաստանյան հետուրարտական «Հայկազունի-Երվանդյան» թագավորություն: Ամենայն հավանականությամբ, արդեն Ք.ա. VII դ. երկրորդ կեսից սկսած, նորաստեղծ հայկական պետությունը սկսել էր տարածապես ընդարձակվել՝ մասի ի հաշիվ Ուրարտուի, իսկ քիչ անց միասնական ղեկավարությունից զրկված ուրարտական փոքրիկ իշխանապետությունների: Հայկազունիների հայկական թագավորության արքաներից աղբյուրագիտական հիմքը թույլ է տալիս խոսել միայն Տիգրան Հայկազնի (Ք.ա. 565- 521 թթ.?) (հայ պատմագրության մեջ ընդունված է «Տիգրան Երվանդյան» տարբերակը, որը գտնում ենք, որ սխալ է) մասին: Իսկ Հայկական լեռնաշխարհում Ուրարտուին փոխարինած նոր Հայկական թագավորության տարածքի սեպագիր աղբյուրներում «Ուրարտու» կոչելը ունի ավանդական և աշխարհագրական հենք:

Ք.ա. 522 թ. Պարսկաստանում տեղի ունեցավ պալատական հեղաշրջում, որի արդյունքում գահ բարձրացավ Դարեհ I-ը (Ք.ա. 522-486 թթ.): Նրա դեմ անմիջապես ընթրստացան նվաճված երկրները և շուրջ երկու տարի ամբողջ Առաջավոր Ասիայում ռազմական գործողություններ էին ընթանում:

Հայոց թագավոր Տիգրան Հայկազնն էլ իր հերթին, օգտվելով Պարսկաստանում տիրող անկայուն ներքաղաքական վիճակից ու հպատակ երկրների ապստամբությունից (Հայաստանն ամենայն հավանականությամբ պարսիկների գերիշխանությունն ընդունել էր Ք.ա. 540-ական թթ. սկզբներին)՝ ապստամբեց Պարսկաստանի դեմ, փորձելով ձեռք բերել լիակատար անկախություն: Հայերը պարսիկների դեմ տվեցին հինգ խոշոր ճակատամարտ, որից երեքում հաղթանակ տարան սակայն ի վերջո պարտվեցին, իսկ Հայոց թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց: Դարեհ I-ը ճնշելով

հպատակ երկրների ապստամբությունները և ամրապնդելով իր իշխանությունը՝ կատարեց վարչաքաղաքական բարեփոխում, որի արդյունքում Պարսից Աքեմենյան տերությունը բաժանվեց 21 սատրապությունների: Այս բաժանման արդյունքում Հայկազունիների Հայոց թագավորությունը կազմեց արեմենյանների XIII սատրապությունը:

Այսպիսով, ամբողջ Առաջավոր Ասիան անցավ պարսիկների տիրապետության տակ, կրկին ձևափոխման ենթարկվեց տարածաշրջանի էթնոքաղաքական քարտեզը, որն իր տեսքը պահպանեց շուրջ երկու դար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ ներկայացնենք նրանում տեղ գտած դրույթներն ու եզրակացությունները՝

1. Ասորեստանի թագավորները նվաճված տարածքների բնակչության նկատմամբ վարում էին զանգվածային վերաբնակեցման քաղաքականություն: Նմանատիպ քաղաքականության ընդհանրական բնութագրման համար որպես տերմին կարելի է օգտագործել արքայերեն *nasāhu* (*našāhu*, *iss(š)uh*) բայը («արմատախիլ անել, փոխել, ոչնչացնել»): Դրա էությունը հետևյալն է. նվաճելով նոր տարածքներ՝ բնակչությանը տեղահանում և վերաբնակեցնում էին հսկայածավալ տերության ծայրամասերում: Իսկ արդեն տեղահանված տարածքներում էլ վերաբնակեցնում էին այլ տարածքների բնակիչներին, որի արդյունքում կտրուկ փոփոխվում էր այդ տարածքների էթնիկական պատկերը: *nasāhu*-ի քաղաքականության կիրառումը, որը հիմնականում քաղաքական նպատակներ էր հետապնդում (այն իրենից մի տեսակ էթնիկական ձուլում կամ աստրականացում էր ներկայացնում), չտվեց սպասված արդյունքներ: Հետագայում այն նպաստեց և արագացրեց Ասորեստանի անկման գործընթացը:

2. Երևույթի քննությունը ստիպել է ենթադրել, որ արտաքին քաղաքականության մեջ վերաբնակեցման *զանգվածային* կիրառումը որպես այդպիսին առաջին անգամ հանդես է եկել Ուրարտուում, և հնարավոր է, որ վերջինից էլ այն փոխառած լինեն ասորեստանցիները: Իսկ նույն քաղաքականության «ուրարտական մոդելի» համար կարելի է որոշ վերապահումներով որպես եզրույթ օգտագործել գրեթե նույն իմաստը կող ուրարտերեն *tamh(u)ʔ, tašm(u)ʔ, nah(u)ʔ* բայերը:

3. Չանգվածային վերաբնակեցումների արդյունքում, ճիշտ է, փոփոխվում էր տվյալ տարածաշրջանի էթնիկական պատկերը, և նվազում էր վերաբնակվողների ըմբոստության հավանականությունը, այս էլ միայն ուժեղ ռազմական մեքենայի պարագայում, սակայն նույն մեքենայի քայքայումը հանգեցրեց աղետալի իրավիճակների՝ Ասորեստանի և Ուրարտուի անկմանը:

4. Ք.ա. 609-607 թթ. բաբելական գործերի դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններ կատարած արշավանքներն ուղղված էին ասորեստանյան պետության մնացուկների վերացման դեմ:

5. Մինչև նոր փաստերի ի հայտ գալը՝ պետք է ընդունել Ուրարտական պետության «տրոհման» տեսությունը՝ Ք.ա. VII դ. երրորդ քառորդում: Վերջին հաշվով այն գրավեց և իրեն ենթարկեց ոչ թե Մարաստանը, ինչպես ընդունված է ցայսօր, այլ՝ հայկական «Տուն Թորգոմայ» պետությունը: Հետագայում, արդեն

Հայկական լեռնաշխարհում Ուրարտուի տեղը զբաղեցրած Հայկական թագավորության տարածքի սեպագիր աղբյուրներում «Ուրարտու» կոչելը ունի ավանդական և աշխարհագրական հենք: Իսկ Զ.ա. 607 թ. Բիթ-Խանունիայի լեռների հիշատակումը՝ կապված այդ շրջանում («Ուրարտու երկրի շրջանում») բաբելական գորքերի ռազմական գործողությունների հետ, համապատասխանում է «Աշխարհացույցյան» Աղձնիք նահանգի Անգեղտուն կամ էլ այդ նահանգի որևէ այլ գավառին:

6. Չափազանցեցված է Հերոդոտոսի տեղեկությունը սկյութների 28-ամյա իշխանության մասին Առաջավոր Ասիայում: Այն ավելի շուտ վերաբերել է կիմմերների իշխանությանը Փոքր Ասիայում, որի մասին հույներն իրականում քաջատեղյակ էին:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Թովմա Արծրունու նորբաբելոնյան արքայացանկը և նրա աղբյուրը, Ս.Էջմիածին, Էջմիածին, 2010, Ե, էջ 61-71:
2. Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հողվածների ժողովածու, Երևան, 2011, № 7, էջ 270-276:
3. Աստուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի հյուսիսային արշավանքները, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2011, № 1 (186), էջ 261-273:
4. «Համաշխարհային տերության» գաղափարի կիրառումը Ասորեստանում, Գ-արուն, Երևան, 2012, № 9-10, էջ 121-126:
5. Մերձավոր Արևելքում սկյութների 28-ամյա գերիշխանության հիմնախնդիրը, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հողվածների ժողովածու, Երևան, 2012, № 8, էջ 142-151:
6. Նաբոպալասարի (Ք.ա. 625-605 թթ.) կառավարման 18-րդ տարին (B.M. 22047, 1-13) և «Bīt-^mĪša-a-nu-ni-ia»-ի տեղադրության հիմնախնդիրը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձորի պետ. մանկավարժ. ինստիտուտ, Վանաձոր, 2012, էջ 13-32:

ЦАКАНЯН РУСЛАН АРШАКОВИЧ
ЭТНОПОЛИТИЧЕСКИЕ СДВИГИ В ПЕРЕДНЕЙ АЗИИ И В
АРМЯНСКОМ НАГОРЬЕ VII-VI ВВ. ДО Р.Х.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 11 декабря 2013 г. 13.00, по адресу: 0019, г. Ереван, просп. Маршала Баграмяна, 24/4, в Институте востоковедения НАН РА на заседании специализированного совета 006 “Всемирная история”.

РЕЗЮМЕ

В диссертации на основе различных (ассирийских, вавилонских и урартских) клинообразных источников, сочинений античных авторов и научной литературы делается попытка научно обосновать суть этнополитических движений на Ближнем Востоке в VII-VI веках до Р.Х.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы, списка сокращений и приложения, включая три схематические карты и две таблицы.

Во введении обосновывается актуальность и значение темы, цель и задачи, методология, научная новизна и практическое значение, а также приводится обзор источников и использованной литературы.

В первой главе (“Этнополитическая ситуация на Ближнем Востоке в конце VIII в. и в начале VII в. до Р.Х.”). Обсуждая вопросы политики массовых переселений ассирийских и урартских царей, можно предполагать, что в обеих государствах она имела почти одинаковый характер. Но, возможно, что политика массовых переселений завоеванных народов в свою страну – первоначально была зафиксирована в Урартском государстве. Более того, не исключено и то обстоятельство, что ассирийцы могли эту политику заимствовать именно из Урартского государства. И если в Ассирии политика массовых переселений исходила из политических обстоятельств, то в Урарту она изначально имела экономический характер. Такая политика, в итоге, в обеих государствах привела к изменению этнополитической картины и в последствии этого – к упадку обеих государств.

Для политики массовых депортаций в Ассирии можно предлагать аккадский глагол *nasāḫū (našāḫū, iss(š)uḫ)*- «истреблять», «искоренять», «вырывать с корнем», «гнать», и т.д. – как терминологию, а в Урартском государстве – урартские глаголы *tamḫ(u)?, tašm(u)?, naḫ(u)?*. А для политики массовых переселений в Урарту можно предлагать урартский глагол «*eršid(u)*, «*eršidu[bi]* – *сделал заселенным*» и фразу «*ešinini duni*» -«*заселил*».

Во второй главе (“Этнополитические сдвиги на Ближнем Востоке во время гегемонии Ассирии (681-627 гг. до Р.Х.)”) обсуждаются вопросы похода Урартского царя Русы II (685-660(?) до Р.Х.) в заевфратские области, обстоятельства завоевания страны Шубрия Асархаддоном (681-669 до Р.Х.), а также рассматриваются вопросы хронологии антиассирийского восстания мидян.

В результате сравнительного исследования древней истории Ближнего Востока, автор пришел к выводу, что обе кампании имели целью предотвратить

возможность нападения “Дома Торгомы” («Smû Թրղոմայ», «Bêṭ-Tôgarmā/Torgāmā») (во время правления Асархаддона в регионе появились новые силы, которые намеревались захватить гегемонию в регионе. Новые опасности и угрозы в регионе заставили ассирийцев и урартов обратиться на них пристальное внимание). Последние к концу VIII до Р. Х. заняли серьезное положение в Восточной Малой Азии и теперь пытались расширить влияние на востоке и на юго-востоке, представляя этим угрозу для Ассирии и Урарту. И только с этой точки зрения следует исследовать обе вышеупомянутые кампании.

Относительно антиассирийского восстания мидян в ходе исследований автор пришел к заключению, что оно имело место после завоевания Шубрии ассирийцами в том же самом 672 году до Р.Х.

Третья глава (“Перекройка этнополитической карты Ближнего Востока (конец VII в. – первая половина VI в. до Р.Х.)”) Вопреки традиционному мнению (в основном армянской историографии) о том, что потеря самостоятельности Урартского государства относится к периоду последнего этапа ассириовавилонского конфликта (609-607 гг. до Р.Х.) и связывается с походами Набопаласара (625-605 гг. до Р.Х.) в Северную Месопотамию, «Вавилонские хроноки» №№ В.М. 21901 (96-4-9,6), В. М. 22047 (96-4-9,152) не позволяют делать такие выводы. Строки 66-75 В.М. 21901 хроники явно свидетельствуют о том, что походы Набопаласара были направлены против ассирийцев, которые с помощью египетской армии осадили город Харран. По свидетельству 70-72 строк хроники Набопаласар вместо помощи Харрана вел бои в горах Иццалы, где сжигая и разрушая многочисленные горные города, войска дошли до границ Урарту дословно «adiri-ḫat^{mā}[...?]» («до области ...?»), поставил там гарнизон и вернулся в свою страну, так и не оказав помощи Харрану, который в тот момент явно был потерян. А в следующем - 608 году до Р.Х. (В.М. 22047, стк. 1-4) вавилонские войска снова появились на подступах Армянского нагорья.

На этот раз они опять дошли до области Урарту – до гор “Bīt-^mḤa-a-nu-ni-ia”. Насчет локализации последнего у специалистов нет единого мнения. Но, все-таки, следуя маршруту вавилонской армии, можно заключить, что она находилась в северо-западном или северном направлении от Ицаллы и, наверно, соответствовала *гавара* Ангелтун (*Angeltun, Uḫqatḫunniḫ*) «Армянской Географии. И исходя из вышесказанного, можно утверждать, что отождествление «Bīt-^mḤa-a-nu-ni-ia» с лувийской Hanuni(a)ssas и др. армянским Хнусом или с Кордуком (Շորքուք) – явно ошибочны.

И нельзя исключать, что в этом регионе могла быть и совсем другая этнополитическая сила, которой могла быть день ото дня усиливающееся армянское царство «Bêṭ-Tôgarmā/Torgāmā (Smû Թրղոմայ) – Дом Торгома». Итак, можно с уверенностью утверждать, что походы вавилонской армии в то же время несомненно были направлены против ассирийцев.

В заключении диссертации подводятся основные итоги работы.

Работа может представлять интерес для исследователей, занимающихся вопросами истории Древнего Востока и древней истории Армянского нагорья.

TSAKANYAN RUSLAN
**“ETHNOPOLITICAL SHIFTS IN THE NEAR EAST AND ARMENIAN
HIGHLAND IN THE VII-VI CENTURIES B.C.”**

The defense of the dissertation will take place at 13.00, on the 11 of December, 2013 at the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02.

SUMMARY

In the thesis on the basis of various (Assyrian, Babylonian and Urartian) cuneiform sources, works of classical authors and scientific literature makes an attempt to present circumstances of ethno-political shifts in the Near East in the VII-VI centuries B.C.

The dissertation consists of introduction, three chapters, conclusion, the list of the used sources and literature, list of abbreviations and appendix, including three schematic maps and two tables.

In the **First chapter** (“The Ethno-political situation in the Near East at the end of the VIII century and at the beginning of the VII century B.C.”). Discussing the problems of the policy of mass deportations of the Assyrian and Urartian kings, it may be assumed that in both countries it has almost the same character. But it is possible that the policy of mass deportations against conquered peoples in their countries was originally recorded in the state of Urartu. Moreover it is not excluded that the Assyrians could have borrowed this policy from the Urartian state. They carried out displacements of population by force generally with the political purpose in Assyria, with the economic purpose in Urartu. Such policy caused ultimately, in both countries changes of the ethnic situation and as a result, the decline of both states. In addition the author offers Akkadian verb *nasāḫū(nasāḫū, iss(š)uḫ)*- «to root out», «destroy», «drive», and the Urartian verb *tamḫ(u)?, tašm(u)?, naḫ(u)?*-as terms for the mass deportations policy. And for the policy of mass resettlement in Urartu it is possible to offer an Urartian verb «*eršid(u), eršidu|bi* – made populated» and «*ēšinini duni-populated*».

In the **Second Chapter** (“Ethno-political shifts in the Near East during the hegemony of Assyria (681-627 B.C.)”). In this Chapter are discussed the issues of the Urartian King Rusa II’s (685-660(?) B.C.) campaign to Transeuphratian region, the circumstances of the Assyrian conquest of the country Shubria by king Esarhaddon (681-669 B.C.), the specification of the year of the Medians’ anti-Assyrian rebellion as well.

The comparative study of the ancient Near Eastern history permitted the author to conclude that the campaigns were aimed to prevent the possibility of the attack of the “House of Torgom” («Տուղու Թորգոմայ», «Bêt-Tôgarmâ/Torgâmâ») (in the reign of Esarhaddon new dangers had appeared which directed Assyrian attention once again to these regions). The latter had occupied serious position in the Eastern Asia

Minor at the close of the VIII century and now was trying to extend the influence in the East and in the South-East posing a threat for Assyria and Urartu. And only from such point of view it is possible to consider the aforementioned campaigns.

As to the Medians' anti-Assyrian rebellion the author came to a conclusion that it took place after the Assyrian conquest of Shubria in the same year (672 B.C.).

The Third Chapter "Rearrangement of the ethnopolitical map of the Near East (the end of the VII century – the first half of the VI century B. C.)." "The "Babylonian Chronicles" № B.M. 21901 (96-4-9,6) and № B. M. 22047 (96-4-9,152) (though this "Chronicle" is very important to us, unfortunately, it wasn't been paid due attention to) are objects of many studies.

In spite of the traditional opinion (basically in the Armenian historiography) that the loss of the independence of the Kingdom of Urartu dates from the last period of the Assyrian and Babylonian conflict (609-607 B.C.) and connects with the campaigns of Nabopalassar (625-605 B.C.) to North Mesopotamia – the author on the basis of the unique source "Babylonian Chronicles" concludes that such an opinion is purely argemented.

Moreover, the lines 66-75 of the Chronicle B.M. 21901 obviously confirms that the campaigns of the Babylonian King Nabopalassar in 609 B. C., was directed against the Assyrians which had besieged Harran with the aid of the Egyptians. According to the lines 70-72 of the Chronicle Naboplassar battled in the mountains of Izalla, where he set fire and destroyed numerous cities in the mountains, instead of helping Harran. The army reached the borders of «...?» «adi pi-ḫat^{mā}[...?]» ("the district of?"), garrisoned there and Nabopalassar returned to his country, without helping Harran which had obviously been lost at that time. Next year, in the 608 B. C. (B.M. 22047, lines 1-4), the army of Babylonia approached the Armenian Highland and reached the borders of Urartu to the mountain of "Bīt-^mḪa-a-nu-ni-ia", of the localization of which specialists have no common opinion. However, according to the march of the Babylonian army one can conclude that it was situated in the north-western or northern part from Izalla which probably correspond to the Angeḫtun (**Անգեղտուն**) region of the "Armenian Geography". The author has come to conclusion that the identification of «Bīt-^mḪa-a-nu-ni-ia» with Luwian Hanuni(a)ssas and Old Armenian Khnunis or Korduk (Կորդուկ) - is wrong.

Thus, for us it is unequivocal, that the aforesaid Babylonian three campaigns - in 609 B. C. in mountains Izalla, in 608 B. C. in mountains "Bīt-^mḪa-a-nu-ni-ia" and in 607 B. C. «the district of?», were aimed to eliminate the remains of Assyrian power, and theatre of military action was unequivocally in the south-western territories of the Armenian Highland.

It may be possible that there was another ethnopolitical power in this region – getting more powerful - the first Armenian Kingdom of «**Bêṭ-Tôgarmā/Torgāmā (Տուճ Թորգոմայ) – The House of Torgom**». So, we can conclude that the campaigns of Naboplassar had undoubtedly been against the Assyrians.

In the **Conclusion** are given the principal results of the study.

The dissertation may be useful for the researchers dealing with the history of the Ancient Near East, and of the Armenian Highland.

